

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզկենտրոն Հրազդանում տեղի է ունեցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ու Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված հերթական աշխատանքային քննարկումը <<Աշխատանքային օրենսգիրք. իմացություն և կիրառում>> թեմայով:

Ճյուղային արհմիության ներկայացուցիչ-փորձագետները մարզի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատուներին պարզաբանումներ են ներկայացրել Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի>> պահանջների կիրառումն ապահովող գործընթացների վերաբերյալ, պատասխանել հանդիպման մասնակիցների կողմից տրվող բազմաբնույթ հարցերին:

Հաշվի առնելով ծրագրի արդյունավետությունը՝ կազմակերպիչ կողմերը ձեռք են բերել փոխհամաձայնություն նմանատիպ հանդիպումները շարունակական դարձնելու ուղղությամբ:

02.09.2014 թ.

